# ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# ՈՐՈՇՈՒՄ

12 ապրիլի 2024 թվականի թիվ 34-Ա

ք.Երևան

«ԻՄՊՈՒԼՍ» ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովն (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով 2024 թվականի մարտի 13-ին իր նախաձեռնությամբ հարուցված թիվ 7 վարչական վարույթի նյութերը, պարզեց.

Հանձնաժողովը «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) իրեն վերապահված վերահսկողական գործառույթներն իրականացնելիս «ԻՄՊՈՒԼՍ» ՍՊ ընկերության (այսուհետ նաև՝ Հեռարձակող) կողմից հեռարձակվող «ԳՈՐԾԱՐԱՐ ԱԼԻՔ ՖՄ 106.5» լսողական ծրագրի 2024 թվականի փետրվարի 7-ի, 8-ի և 9-ի ժամը 00:00:00-ից մինչև 08:07:29-ն ընկած ժամանակահատվածի ձայնագրության մշտադիտարկման արդյունքների և Հեռարձակողի կողմից 2024 թվականի մարտին էլեկտրոնային գրանցամատյանի՝ սերվեր ներբեռնված տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների համադրության արդյունքում հայտնաբերել է Օրենքի 13-րդ հոդվածի և Հանձնաժողովի 2020 թվականի դեկտեմբերի 29-ի «Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 154-Ա որոշմամբ սահմանված կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) խախտման հատկանիշներ: Արդյունքում 2024 թվականի մարտի 13-ին կազմվել է իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, որն Օրենքի 42-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն հիմք է հանդիսանում վարչական վարույթ հարուցելու համար, իսկ հարուցված վարչական վարույթի շրջանակներում ծառայում է որպես վարչական վարույթի ապացույց:

Հանձնաժողովը, ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով, 2024 թվականի մարտի 13-ին Հեռարձակողի նկատմամբ հարուցել է վարչական վարույթ:

Ըստ Հանձնաժողովի ծրագրերի մոնիտորինգի և վերահսկողության վարչության կողմից կազմված արձանագրության՝ 2024 թվականի փետրվարի 7-ի տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում տեսալսողական հաղորդման անվանում սյունակում.

Ժամը 00:35:00-01:00:00 նշված է՝ «Հո-ռէ-կա», սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել է «Բանկային գաղտնիք».

Ժամը 01:05:00-01:33:00 նշված է՝ «Անօդաչու բիզնես», անոնս, «Անօդաչու բիզնես», սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել է «Գործագործ».

Ժամը 01:35:00-02:00:00 նշված է՝ «Հո-ռէ-կա», սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել է «Երեկոյան Երևան» և նույնը շարունակվել է մինչև ժամը 23:57-ը:

Ստացվում է, որ ժամը 00:35:00-ից մինչև 23:57:00-ն ընկած ժամանակահատվածի հեռարձակումների վերաբերյալ Հեռարձակողի կողմից Հանձնաժողով ներկայացված տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում նշված են այլ հաղորդումներ, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ հեռարձակվել են լիովին այլ հաղորդումներ:

2024 թվականի փետրվարի 8-ի տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում տեսալսողական հաղորդման անվանում սյունակում ժամը 01:05:00-ից մինչև 23:57:00-ն ընկած ժամանակահատվածում նշված են հաղորդումներ, սակայն մշտադիտարկման արդյունքում արձանագրվել է, որ նշված ժամանակահատվածում հեռարձակվել են այլ հաղորդումներ:

Նույնը տեղի է ունեցել նաև 2024 թվականի փետրվարի 9-ին՝ մշտադիտարկման արդյունքում պարզվել է, որ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում տեսալսողական հաղորդման անվանում սյունակում ժամը 00:05:00-ից մինչև 08:00:00-ն ընկած ժամանակահատվածում նշված են հաղորդումներ, սակայն հեռարձակվել են այլ հաղորդումներ:

Հանձնաժողովը հարուցված վարչական վարույթի վերաբերյալ 2024 թվականի մարտի 14-ին թիվ Ե/04/04.1/243-24 գրությամբ ծանուցել է Հեռարձակողին և հայտնել, որ այս հարցի վերաբերյալ կարող են ներկայացնել իրենց պարզաբանումներն ու բացատրությունները:

Հեռարձակողը նշված գրությանն ի պատասխան 2024 թվականի մարտի 19-ին Հանձնաժողով է ներկայացրել վարչական վարույթի վերաբերյալ իր պարզաբանումները՝ նշելով, որ.

Վերոհիշյալ ժամանակահատվածում կյանքից հեռացել է իրենց գործընկեր՝ FM 106.5» հաճախականությամբ հեռարձակվող «Հայու տեսակ» հաղորդաշարի ավելի քան 500 թողարկման հեղինակ, «Կարին» երգի-պարի խմբի ղեկավար Գագիկ Գինոսյանը: Հեռարձակողը նշել է, որ եթերացանկում փոփոխված հաղորդումները նվիրված են եղել Գ.Գինոսյանի հիշատակին՝ հնարավորություն տալով ռադիոլսողներին յուրօրինակ ձևով հարգանքի տուրք մատուցել կյանքից հեռացած գործընկերոջը: Հեռարձակողը հայտնել է նաև, որ գրանցամատյանի համար պատասխանատու աշխատակիցը թյուրիմացաբար և առանց որևէ միտման չի արձանագրել եթերացանկի փոփոխությունը, և խնդրել է Հանձնաժողովին հնարավորություն տալ խմբագրել գրանցամատյանը և շտկել անհամապատասխանությունները:

***Հանձնաժողովի հիմնավորումները (պատճառաբանությունները) և եզրահանգումները.***

Այսպիսով, վարչական վարույթի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությամբ, ձեռք բերված ապացույցների ուսումնասիրության և գնահատման արդյունքում Հանձնաժողովն ամրագրում է հետևյալը.

**Օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** լիցենզիա ստացած Հեռարձակողները պարտավոր են վարել տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյան և պահպանել իրենց հեռարձակած տեսալսողական հաղորդումների տեսագրություններն ու ձայնագրությունները՝ հեռարձակման օրվանից սկսած 45 օր ժամկետով, բացառությամբ սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ կետի «զ» ենթակետով նախատեսված դեպքերի:

**Նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի համաձայն՝** տեսալսողական հաղորդումները պետք է գրանցվեն կարգավորող պետական մարմնի համար հասանելիություն ունեցող տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում, որի ձևը և վարման կարգը սահմանում է կարգավորող պետական մարմինը:

Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալների հիման վրա կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Կարգավորող պետական մարմինը ընտրանքային սկզբունքով իրականացնում է Հեռարձակողների կողմից հեռարձակվող տեսալսողական տեղեկատվության մշտադիտարկումներ յուրաքանչյուր Հեռարձակողի համար ամսվա ընթացքում առնվազն հինգ օր: Մշտադիտարկման արդյունքները կարող են համադրվել հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալներին:

**Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետի համաձայն՝** Հանձնաժողովը իրականացնում է Հեռարձակողների և օպերատորների գործունեության մշտադիտարկում:

**Օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝** Հեռարձակողների գործունեության մշտադիտարկումն իրականացվում է ուղղակի դիտարկման, իսկ օպերատորի դեպքում՝ նաև տեղում դիտարկում իրականացնելու միջոցով, իսկ նույն հոդվածի 8-րդ և 9-րդ մասերը սահմանում են.

«8. Մշտադիտարկման արդյունքներով կարգավորող պետական մարմնի ներկայացուցիչը մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ կազմում է արձանագրություն:

9. Մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են մշտադիտարկման արդյունքների համառոտ շարադրանքը, ինչպես նաև վարչական վարույթ հարուցելու կամ հարուցված վարչական վարույթի համար էական նշանակություն ունեցող բոլոր փաստական հանգամանքները, այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները: Դիտարկման արդյունքների և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների համադրման դեպքում մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ արձանագրության մեջ նշվում են նաև դիտարկման արդյունքների և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանների տվյալների միջև անհամապատասխանությունը, անհամապատասխանությունների քանակը և տևողությունը:»

**Կարգի 6-րդ կետի համաձայն՝** տեսալսողական մեդիածառայություն մատուցողները տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում մուտքագրում են հետևյալ տեղեկությունները՝

1) տեսալսողական հաղորդման հեռարձակման օրը, ամիսը, տարեթիվը,

2) տեսալսողական հաղորդման սկիզբը և ավարտը,

3) տեսալսողական հաղորդման անվանումը,

4) տեսալսողական հաղորդման թեմատիկ ուղղվածությունը,

5) հեռարձակման տեսակները (հայրենական, սեփական, օտարերկրյա, վերահեռարձակում, տեխնիկական անջատում, պրոֆիլակտիկա, ընդմիջում),

6) տեսալսողական հաղորդման հեռարձակման լեզուն,

7) այլ տվյալներ:

**Իսկ նույն Կարգի 7-րդ կետի համաձայն՝** տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանում սույն կարգի 6-րդ կետի 1)-ից մինչև 6) ենթակետերում նշված տեղեկությունների գրանցումը պարտադիր է տեսալսողական մեդիածառայություն մատուցողների համար:

Հիմք ընդունելով վերը նշված իրավական դրույթների պահանջները՝ Հանձնաժողովն ամրագրում է, որ Հեռարձակողն իր գործունեությունն իրականացնելիս և տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանը լրացնելիս պարտավոր էր պահպանել Օրենքով և Կարգով սահմանված դրույթները:

Փաստում ենք նաև, որ Օրենքով և Կարգով չեն նախատեսվել բացառություններ էլեկտրոնային մատյանի լրացման համար, այն պետք է հստակ պարունակի այն տեղեկատվությունը, որը նախատեսված է Կարգով, որի ձևը և վարման կարգը սահմանելու իրավասությունը Օրենքով տրված է Հանձնաժողովին, առավել ևս, երբ հեռարձակման ընթացքում տեղի են ունենում փոփոխություններ, տեխնիկական անջատումներ և այլ փոխարինումներ:

Այսինքն՝ Հեռարձակողները էլեկտրոնային գրանցամատյանի սերվեր պետք է ներբեռնեն տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի հաստատված, ստույգ տվյալներ հեռարձակված հաղորդումների վերաբերյալ, որի հիման վրա էլ կարգավորող պետական մարմինը վերահսկում է Հեռարձակողների գործունեության համապատասխանությունը օրենսդրության պահանջներին: Ցանկանում ենք նշել նաև, որ էլեկտրոնային մատյանում լրացվում է արդեն իսկ եթեր հեռարձակված հաղորդումների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչը հեշտացնում է աշխատանքը, այլ ոչ ապագայում ակնկալվող, նախատեսվող հաղորդումների վերաբերյալ, որի պարագայում գուցե կարող էին հաշվի առնվել ֆորս մաժորային կամ որոշակի փոփոխություններից առաջացած խնդիրները:

Փաստենք, որ Հեռարձակողը 2017 թվականի հոկտեմբերի 06-ից հանդիսանում է Հանձնաժողովի կողմից լիցենզավորված իրավաբանական անձ (սփռման տարածքը Երևան քաղաք), որը կազմում և սպառողին է ներկայացնում տեսալսողական տեղեկատվություն և պարտավոր է պահպանել տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջները, իսկ օրենքի դրույթները խախտելու դեպքում կրել պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ուստի օրենքի պահանջի չկատարումն ինքնին բերում է պատասխանատվության:

Հեռարձակողը պետք է հաշվի առնի, որ օրենքներով հստակ սահմանվում են իրավական նորմեր, որոնց չպահպանելն առաջացնում է իրավական հետևանքներ, և Հեռարձակողը պատասխանատվություն է կրում տեսալսողական մեդիայի ոլորտը կարգավորող օրենսդրության կիրառման ապահովման համար և տվյալ դեպքում Հեռարձակողը պարտավոր էր պահպանել Օրենքի 13-րդ հոդվածով և Կարգի 6-րդ կետով սահմանված դրույթների պահանջները:

Հանձնաժողովի կողմից հաշվի է առնվել վարչական վարույթի վերաբերյալ Հեռարձակողի կողմից ներկայացված բացատրություններն այն մասին, որ «ԻՄՊՈՒԼՍ» ՍՊ ընկերության գրանցամատյանի համար պատասխանատու աշխատակիցը թյուրիմացաբար չի արձանագրել եթերացանկի փոփոխությունը: Սակայն Հեռարձակողի սույն պատճառաբանությունները հիմք չեն կարող հանդիսանալ նրա նկատմամբ պատասխանատվության միջոց չկիրառելու համար:

Այսպես, հիմք ընդունելով վերը նշված փաստարկները, Օրենքի դրույթները և ձեռք բերված ապացույցները՝ Հանձնաժողովն ամրագրում է, որ «ԻՄՊՈՒԼՍ» ՍՊ ընկերության

կողմից 2024 թվականի մարտին էլեկտրոնային գրանցամատյանի՝ սերվեր ներբեռնված տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի տվյալներում առկա են անհամապատասխանություններ:

***Օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն***՝ կարգավորող պետական մարմինը՝ Օրենքի խախտման կամ իր որոշումները չկատարելու դեպքում կիրառում է պատասխանատվության միջոցներ:

***Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն***՝ կարգավորող պետական մարմնի կողմից տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու, ինչպես նաև պետական այլ մարմինների կողմից իրենց իրավասությունների շրջանակում տեսալսողական մեդիայի բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտման դեպքեր հայտնաբերվելու և դրանց մասին կարգավորող պետական մարմնին գրավոր տեղեկացվելու դեպքում կարգավորող պետական մարմինը կիրառում է հետևյալ վարչական տույժերը.

1) գրավոր նախազգուշացում.

**2) տուգանք.**

3) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության կասեցում.

4) հեղինակազորման կամ լիցենզիայի գործողության դադարեցում:

***Օրենքի 57-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն***՝ տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի վարման սահմանված կարգը խախտելը՝ **առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:**

Այսպես, ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 13-րդ հոդվածով, 32-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 14-րդ կետերով, 42-րդ հոդվածի 1-ին, 8-րդ և 9-րդ մասերով, 55-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հանձնաժողովի 29.12.2020թ. «Տեսալսողական հաղորդումների հաշվառման էլեկտրոնային մատյանի ձևը և վարման կարգը սահմանելու մասին» թիվ 154-Ա որոշմամբ սահմանված կարգի 6-րդ և 7-րդ կետերով և հիմք ընդունելով Օրենքի 57-րդ հոդվածի 15-րդ մասը՝ Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովը ***որոշեց.***

1. «ԻՄՊՈՒԼՍ» ՍՊ ընկերության նկատմամբ կիրառել «Տեսալսողական մեդիայի մասին» օրենքի 57-րդ հոդվածի 15-րդ մասով սահմանված վարչական տույժը՝ տուգանելով սահմանված 100 000 (մեկ հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն «ԻՄՊՈՒԼՍ» ՍՊ ընկերությանը պատշաճ ձևով հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

3.Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ Տ.ՀԱԿՈԲՅԱՆ

2024թ. ապրիլի 12
ք.Երևան